Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունվարի 9-ի N 18-Ն որոշման

Կ Ա Ր Գ ՈՒ Զ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Զ Ն Ե Ր

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են թանգարանների հավատարմագրման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

2. Թանգարանների հավատարմագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ «Թանգարանների մասին» օրենքին (այսուհետ՝ օրենք) և սույն կարգի պահանջներին համապատասխան:

3. Թանգարանների կարգավիճակը հավաստվում է վկայականով (այսուհետ՝ վկայական) և հավատարմագրման գրանցամատյանում (այսուհետ՝ գրանցամատյան)՝ գրանցումով:

4. Հավատարմագրման գործընթացն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով ստեղծվում է թանգարանների հավատարմագրման մասնագիտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատվում դրա աշխատակարգն ու անհատական կազմը:

5. Հանձնաժողովն իրավասու է քննարկել սույն կարգի համաձայն իրեն ներկայացված փաստաթղթերը և տրամադրել եզրակացություն թանգարանին կարգավիճակ տալու կամ մերժելու վերաբերյալ:

6. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն իր պաշտոնական կայքում տեղադրում և յուրաքանչյուր տարի թարմացնում է հավատարմագրված թանգարանների վերաբերյալ տեղեկատվությունը, որը պետք է ներառի՝

1) թանգարանի անվանումը.

2) թանգարանի գտնվելու վայրը.

3) վկայականի համարը, տրամադրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.

4) թանգարանի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը:

2. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

7. Թանգարանի հավատարմագրման համար դիմում կարող է ներկայացնել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ թանգարանի տնօրենը (այսուհետ՝ հավակնորդ), անկախ ներկայացվող թանգարանի հիմնադրից և կազմակերպաիրավական ձևից:

8. Հավատարմագրման համար հավակնորդը դիմում է նախարարին՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) տեղեկանք թանգարանային գործունեությանը բնորոշ առարկաների թվի և հավաքածուների թեմատիկ բովանդակության, դրանց պահպանության, պաշտպանության, ցուցադրման/հանրայնացման պայմանների մասին.

2) տեղեկանք թանգարանի գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարածքների տնօրինման (հավաքածուների պահոցների համար նախատեսված տարածք, ցուցադրության կազմակերպման տարածք (ցուցասրահ), վարչական և մասնագիտական անձնակազմի աշխատանքների կազմակերպման համար տարածք), թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանման և ցուցադրման պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայության, թանգարանային առարկաների պահպանման համար անհրաժեշտ ջերմախոնավային ռեժիմով և անվտանգության միջոցներով, թանգարանային տարածքների և ցուցասրահների հասանելիությամբ և խելամիտ հարմարեցմամբ ապահովվածության մասին.

3) տեղեկանք թանգարանային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տիրապետման (աշխատակազմին օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի վճարումը, թանգարանի պահպանության և կոմունալ ծախսերն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին) և դրանց մուտքերի աղբյուրի մասին.

4) տեղեկանք նախարարի հրամանով սահմանված թանգարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշներին համապատասխան որակավորված մասնագետներից կազմված աշխատակազմի առկայության մասին:

9. Դիմումը և կից փաստաթղթերն ընդունում է նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը (այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանում) և երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է դրանք: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա կառուցվածքային ստորաբաժանումը հավակնորդին առաջարկում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում համալրել այն: Դիմումն ու կից փաստաթղթերի փաթեթն ամբողջական լինելու դեպքում կառուցվածքային ստորաբաժանումը զեկուցում է նախարարին հանձնաժողովի նիստ կազմակերպելու անհրաժեշտության մասին:

10. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված ժամկետում հավակնորդի կողմից փաստաթղթերի թերությունները չվերացվելու կամ ներկայացված փաստաթղթերն օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում դիմումը մերժվում է:

11. Հանձնաժողովը նիստում քննարկում է դիմումը և տալիս այն բավարարելու կամ մերժելու մասին եզրակացություն:

12. Հանձնաժողովը դիմումը մերժում է, եթե չի բավարարում սույն կարգի 8-րդ կետի պահանջները:

13. Սույն կարգի 11-րդ կետով նախատեսված եզրակացությունը ստանալուց հետո կառուցվածքային ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է նախարարի հրամանի նախագիծ՝ հավակնորդի դիմումը բավարարելու կամ գրության նախագիծ՝ դիմումը մերժելու վերաբերյալ՝ դրան կցելով դիմումը, կից ներկայացրած փաստաթղթերը, հանձնաժողովի եզրակացությունը և նիստի արձանագրության քաղվածքը:

14. Նախարարը երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի եզրակացության հիման վրա հրաման է ընդունում թանգարանին հավատարմագրման վկայական տալու մասին կամ ստորագրում է մերժման վերաբերյալ գրությունը:

15. Գործող պետական կամ համայնքային թանգարանի հավատարմագրումն իրականացվում է պարզեցված ձևով:

16. Պարզեցված ձևով հավատարմագրման համար հավակնորդը դիմում է նախարարին՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) տեղեկանք թանգարանի գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարածքների տնօրինման (հավաքածուների պահոցների համար նախատեսված տարածք, ցուցադրության կազմակերպման տարածք (ցուցասրահ), վարչական և մասնագիտական անձնակազմի աշխատանքների կազմակերպման համար տարածք), թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանման և ցուցադրման պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայության, թանգարանային առարկաների պահպանման համար անհրաժեշտ ջերմախոնավային ռեժիմով և անվտանգության միջոցներով, թանգարանային տարածքների և ցուցասրահների հասանելիությամբ և խելամիտ հարմարեցմամբ ապահովվածության մասին.

2) տեղեկանք լիազոր պետական մարմնի սահմանած՝ թանգարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշներին համապատասխան որակավորված աշխատակազմի առկայության մասին:

17. Դիմումը և կից փաստաթղթերն ընդունում է կառուցվածքային ստորաբաժանումը և երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է դրանք: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա կառուցվածքային ստորաբաժանումը հավակնորդին առաջարկում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում համալրել այն: Դիմումն ու կից փաստաթղթերի փաթեթն ամբողջացնելուց հետո կառուցվածքային ստորաբաժանումը զեկուցում է նախարարին հանձնաժողովի նիստ կազմակերպելու անհրաժեշտության մասին:

18. Սույն կարգի 26-րդ կետի չափորոշիչները չբավարարող պետական կամ համայնքային թանգարանը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամանակացույցով (տարեկան երկու թանգարանից ոչ պակաս) համապատասխանեցվում է պահանջներին:

19. Հանձնաժողովը նիստում քննարկում է դիմումը և տալիս այն բավարարելու կամ մերժելու մասին եզրակացություն:

20. Սույն կարգի 19-րդ կետով նախատեսված եզրակացությունը ստանալուց հետո կառուցվածքային ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է նախարարի հրամանի նախագիծ՝ հավակնորդի դիմումը բավարարելու կամ գրության նախագիծ՝ դիմումը մերժելու վերաբերյալ՝ դրան կցելով դիմումը, կից ներկայացրած փաստաթղթերը, հանձնաժողովի եզրակացությունը և նիստի արձանագրության քաղվածքը:

21. Նախարարը երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի եզրակացության հիման վրա հրաման է ընդունում թանգարանին հավատարմագրման վկայական տալու մասին կամ ստորագրում է մերժման վերաբերյալ գրությունը:

3. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

22. Կառուցվածքային ստորաբաժանումը նախարարի հրամանի հիման վրա երեք աշխատանքային օրվա ընթացքում պատրաստում է հավատարմագրման վկայականը և ներկայացնում նախարարի հաստատմանը:

23. Վկայականը նախարարի կողմից հաստատվելուց հետո կառուցվածքային ստորաբաժանումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում վկայականը գրանցում է գրանցամատյանում և այն հանձնում հավակնորդին: Վկայականը տրվում է 10 (տասը) տարի ժամկետով՝ վերահավատարմագրման հնարավորությամբ:

24. Վկայականի, գրանցամատյանի ձևերն ու վարման կարգը սահմանում է նախարարը:

25. Վկայականի կորստի կամ վնասվելու դեպքում թանգարանի դիմումի և գրանցամատյանի տվյալների հիման վրա տրվում է նույն համարով և գործողության ժամկետով նոր վկայական՝ վերին աջ անկյունում «Կրկնօրինակ» նշումով:

4. ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

26. Թանգարանը հավատարմագրվում է համաձայն հետևյալ չափորոշիչների՝

1) հավակնորդը տիրապետում է թանգարանին բնորոշ հավաքածուների և իրականացնում է առկա հավաքածուների ուսումնասիրություն, հաշվառում,

պահպանություն, համալրում և հանրայնացում՝ ըստ լիազոր պետական մարմնի հաստատած պայմանակարգերի.

2) հավակնորդը տնօրինում է թանգարանի գործունեության իրականացման համար անհրաժեշտ տարածքների (հավաքածուների պահոցների համար նախատեսված տարածք, ցուցադրության կազմակերպման տարածք (ցուցասրահ), վարչական և մասնագիտական անձնակազմի աշխատանքների կազմակերպման համար տարածք), թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանման և ցուցադրման պահանջներին համապատասխան նյութատեխնիկական բազայի, ապահովված է թանգարանային առարկաների պահպանման համար անհրաժեշտ ջերմախոնավային ռեժիմով և անվտանգության միջոցներով, թանգարանային տարածքների և ցուցասրահների հասանելիությամբ և խելամիտ հարմարեցմամբ.

3) հավակնորդն ունի լիազոր պետական մարմնի սահմանած՝ թանգարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշներին համապատասխան որակավորված աշխատակազմ.

4) հավակնորդը տիրապետում է թանգարանի գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներին (աշխատակազմին առնվազն օրենքով նվազագույն աշխատավարձի չափով վարձատրության, կոմունալ ծախսերի ապահովման համար) կամ դրանց մուտքերի աղբյուրին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ